



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական
աշխատողների մասնագիտական կարողությունների և
հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների
զարգացման գործում

Դաստիարակ՝ Սյուզաննա Մղղեսյան
Մանկապարտեզ՝ «Ավանի մ/մանկապարտեզներ» ՀՈԱԿ
համար 55 մ/մանկապարտեզ

2023թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՅԻՄԱԿԱՆ ՄԱՍ	6
ԳԼՈՒԽ 1 Եքսկուրսիաների՝ կառուցվածքը, կազմակերպման ձևերն ու մեթոդները	6
1.1 Եքսկուրսիայի անցկացման մեթոդները	6
1.2 Եքսկուրսիայի կառուցվածքը	7
1.3 ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՊԱՐԵՐ	8
ԳԼՈՒԽ 2 Եքսկուրսիան որպես կրթադաստիարակչական գործունեության ձև	10
2.1 Եքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում	11
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ	15
ԳԼՈՒԽ 3 Եքսկուրսիաների և մշակութային այցերի օրինակներ՝ իմ աշխատանքային փորձից	15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	20
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքը անձի ձևավորման կարևորագույն փուլերից մեկն է, ուստի շատ կարևոր է, թե այս շրջանում երեխային ինչ պետք է սովորեցնել, հաղորդել և առավել կարևոր է, թե ինչպես, ինչ մեթոդներով ու ձևերով դա անել:

Ն/դ տարիքի յուրաքանչյուր երեխա հետաքրքրասեր է իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ և սպունգի պես կլանում է գիտելիքները: Այս տարիքում ամեն ինչ հետաքրքիր է երեխային և ակտիվորեն ընկալում է աշխարհը, հետևաբար երեխայի տարիքային այս առանձնահատկությունը պետք է առավելագույնս ճիշտ օգտագործվի ն/դ ուսումնական հաստատությունում իրականացվելիք կրթադպրոցական գործունեության ընթացքում: Հենց այս ժամանակահատվածում կարևոր է երեխաների մեջ սերմանել սեր հայրենիքի, բնության նկատմամբ, հետաքրքրություն առաջացնել նրա մշակութային արժեքների նկատմամբ, զարգացնել պատկերացումները անձի, հասարակության մասին: Այսպիսի կարողունակությունների ձևավորմանը մեծապես նպաստում են պարբերաբար կազմակերպվող էքսկուրսիաները և մշակութային այցերը: Ուսումնական և դաստիարակչական այս առանձնահատուկ ձևը հնարավորություն է տալիս բնական պայմաններում դիտարկել առարկաները և երևույթները: Միաժամանակ երեխայի մոտ ակտիվացնում է մտավոր ակտիվությունն ու հուզական ոլորտը:

Էքսկուրսիաները զարգացնում, ձևավորում, ամրապնդում են մարդու ճանաչողական ստեղծագործական կարողությունները: Նա կարողանում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել և այդ գիտելիքները ճիշտ կիրառել: Էքսկուրսիան նպաստում է հետազոտական կարողությունների ձևավորմանը և ամրակայում է նրա բազմաբնույթ մտածողությանը, որոնք ի հայտ են գալիս ծննդյան պահից: Էքսկուրսիաներն իրենց կարևոր տեղն ունեն ուսուցման գործընթացն արդյունավետ դարձնելու գործուն:

Էքսկուրսիաներն ու մշակույթային այցերը տեսարժան վայրերի, թանգարանների, գրադարանների, թատրոնների, արտադրական ձեռնարկությունների, պատմամշակութային կոթողների և բնության գիրկ այցելություններն են՝ ուսումնադպրոցական նպատակով:

Էքսկուրսիաների էռթյունը կայանում է ցուցադրման և բացատրման համակցության մեջ:Այն զննական մեթոդ է:Էքսկուրսիաները և մշակութային այցերը գործունեության այն ձևերն են,որոնք երեխաներին իսկապես դուր են գալիս:

21-րդ դարի ուսումնական հաստատությունում.ինչը մեզանից պահանջում է անընդհատ նոր մոտեցումների,առավելուացիոնալ մեթոդներ է գործունեության ավելի հետաքրքրաշարժ ու ժամանակակից ձևերի կիրառում արդիուսուցումը կյանքի հետ կապելու,ուսուցման, դաստիարակման մեջողներն ու ձևերը կատարելագործելու և ակտիվացնելու նոր պահանջներից ելնելով:Ենց այդպիսի գործունեության ձևերից մեկն էլ էքսկուրսիաներն ու մշակույթային այսերն են:

Համապատասխանությունը նոր չափորոշչի և ծրագրի պահանջներին

Ըստ նոր ծրագրային՝պահանջների գործունեության տարրեր ձևերի կիրառմամբ պետք է լուծել սանի ֆիզիկական, մտավոր,բարոյական աշխատանքային,տնտեսագիտական,իրավական, էկոլոգիական,սեռային,գեղարվեստագեղագիտական դաստիարակության խնդիրները և ըստ այդ գործունեության ձևերի,այդ խնդիրներից շատերն իրականացվում են արտամանկապարտեզային պայմաններում:Եվ հենց այստեղ է,որ շատ մեծ ու կարևոր է էքսկուրսիաների ու մշակույթային այցերի ընթացած հնարավորություններու,քանի որ գործունեության այս ձևով պահովվում է նոր չափորոշչի ոլորտային վերջնարդյունքներից շատերը և ձևավորվում կարողունակությունները, հատկապես՝

- լեզվական և հաղորդակցական կարողունակությունությունը
- ճանաչողական կարողունակությունը
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունը
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը
- մշակույթային կարողունակությունը
- տնտեսական կարողունակությունը
- ֆիզիկական կարողունակությունը

Նպատակը՝Նկատի ունենալով թեմայի արդիականությունը շատ կարևորելով ուսուցումն ու դաստիարակությունը գործունեության ձևը,ին հետազոտական աշխատանքի կատարումը

նպատակ ունիտեսական նյութի ուսումնասիրմանք, էքսկուրսիաների և մշակույթային այցերի իմ փորձի ներկայացմամբ, ևս մեկ անգամ կարևորել գործունեության այս ձևը, ներկայացնել դրանց արդյունավետությունը սաների զարգացման գործում, կատարել առաջարկներ, որոնք կնպաստեն դրա ակտիվացմանը:

Կարևորում եմ նրանց ճիշտ և տեղին կազմակերպումը: Նախակրթարանում երեխաների մոտ ամեն ինչը դժվարությամբ է ձևավորվում, նրանց մոտ «կոլեկտիվ» հասկացությունը դրսևորվելուց հետո, հաջորդ քայլը՝ էքսկուրսիա գնալն է: Այս տարիքային խմբին նպատակահարմար է տանել տիկնիկային թատրոն՝ նախապես ծանոթացնելով ներկայացման գլխավոր թեմատիկային, էթիկայի կանոններին, անձի դրսևորման գործուներին:

Այսպես նրանք կկարողանան կողմնորոշվել տարածության մեջ, կզարգացնեն իրենց տեսողական դաշտի պատկերացումները շրջապատող իրերի և անձանց նկատմամբ:

ՐԻՄԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1 Եքսկուրսիաների՝ կառուցվածքը, կազմակերպման ձևերն ու մեթոդները

Եքսկուրսիայի ընթացքում մանկապարտեզի դաստիարակը կիրառում է մանկավարժական հատուկ տեխնիկա և մեթոդներ:

Եքսկուրսիան բնույթով աշխույժ է և հուզիչ, դաստիարակը պետք է խուսափի պաշտոնական ուսուցումից: Եքսկուրսիայի ընթացքում դաստիարակի՝ սաների հետ շփվելու ոճը պետք է լինի ավելի անկեղծ ու նուրբ: Սաները պետք է գիտելիք ձեռք բերեն առանց նույնիսկ դա գիտակցելու:

Եքսկուրսիայի բովանդակությունը պարտադիր պետք է համապատասխանի երեխաների տարիքին և հետաքրքրություններին: Պետք է սահմանապակվի՝ առարկաների թիվը, որոնց վրա կենտրոնացված է ուշադրությունը: Այսպիսով, կրտսեր խմբում, բնության գրկում եքսկուրսիայի ժամանակ, պետք է կենտրոնանալ միայն մեկ առարկայի վրա: Նախադպրոցական տարիքի սաներին կարող է տրվել հետազոտական բնույթի առաջադրանք գտնեն գարնան բոլոր նշանները այգում կամ տեղանքում և այնուհետև արտացոլել դրանք:

1.1 Եքսկուրսիայի անցկացման մեթոդները

Եքսկուրսիաների կազմակերպման և անցկացման մեթոդներին ներկայացվող պահանջները,

- Բովանդակության համապատասխանությունը երեխաների հետաքրքրություններին,
- Թեմային ուղղված լինելը (ոչ մի պատահական երևույթ չպետք է շեղի սանի ուշադրությունը իիմնականից)
- Չպետք է ունենա պարապմունքի ավանդական ձև,
- Դաստիարակի նախապատրաստում,
- Նախապես որոշել այն խոսքի ձևերը, որոնք առաջարկվելու են,

- Էքսկուրսիայից հետո դիտել նկարներ,վարել զրույց.դիդակտիկ խաղ, նկարել տպավորությունները
- Էքսկուրսիաների քանակը պլանավորել

Էքսկուրսիա կազմակերպելիս և անցկացնելիս պետք է հիշել,որ նույնիսկ հետաքրքիր տեղեկատվության մեջ քանակությունը հանգեցնում է ուշադրության թուլացման: Առաջարկվում են նախադպրոցական տարիքի երեխաների ուշադրությունը՝ պահպանելու հետևյալ եղանակները.

- Տեսարժան վայրերի ցուցադրում,որոնք պետք է տարբերվեն ճշգրտությամբ, պատկերավորությամբ:
- Տեսողական միջոցների օգտագործում դրանք օգտագործելիս լսողական ընկալումն անցնում է տեսողականի, ստեղծվում է սթրեսի որոշակի թուլացում:
- Կատակներ,հումոր:
- Չարց-պատասխան:

Էքսկուրսիան հետաքրքիր լինելու համար մանկավարժը պետք է պատրաստի բանաստեղծություններ,հանելուկներ,խաղեր:

1.2 Էքսկուրսիայի կառուցվածքը

Էքսկուրսիա մշակելիս կարևոր է առաջարկել և լուծել ուսումնական, կրթական և զարգացնող բնույթի մի շարք խնդիրներ: Դաստիարակը պլանավորում է էքսկուրսիա՝ ելնելով ծրագրի պահանջներից և շրջակա տարածքի առանձնահատկություններից:

- Ներածական զրույց
- Կոլեկտիվ դիտարկում
- Երեխաների անհատական ինքնագործունեություն
- Նյութերի հավաքածու
- Մանկական խաղեր հավաքված նյութերով
- Եզրափակիչ մասը

Պատրաստվելով գալիք էքսկուրսիային դաստիարակը Երեխաներին նախապես տեղեկացնում է էքսկուրսիայի նպատակը,թե ուր են գնալու և ինչու,ինչ են անելու: Անհրաժեշտ է նաև սաների հետ քննարկել անծանոթ վայրում վարքի կանոնների պահպանման մասին:

Նիմնական մասում՝ բացի դաստիարակի ցուցադրումներից, տեղեկատվության տրամադրումից պետք է սաներին նաև հնարավորեթյուն տալ բավարարել իրենց հետաքրքրությունը ինքնուրույն և ազատ դիտումներ կատարելով:

Եզրափակիչ փուլի հիմնական նպատակը արդյունքների ամփոփումն է:Էքսկուրսիան ավարտելուց հետո,դաստիարակն ու սաները պարտադիր վերլուծում ամփոծում են էքսկուրսիան՝ ամփոփում են ճանաչողական գործունեության արդյունքները,տալիս է հուզական գնահատական, արտահայտում վերաբերմունքը, տպավորությունները նաև կատարում են ստեղծագործական աշխատանք (հատկապես բնության էքսկուրսիայի ընթացքում հավաքված նյութերով) :

1.3 ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՊԱՐԵՌ

Իհարկե, էքսկուրսիա կազմակերպելը ավելի դժվար է, քան ավանդական խմբային պարապմունքի: Նրա հաջողությունը կախված է դաստիարակի պատրաստվածությունից: Դաստիարակի պատրաստումը հիմնականուն նպատակի և ծրագրի բովանդակության ընտրությունն է: Դաստիարակը նախօրոք մտածում է միջոցառման բոլոր պահերի մասին (ներառյալ ճանապարհին անցկացրած ժամանակը),որոշում է իր հետ վերցնել օգնական (դայակ,մեթոդիստ,մեկ այլ ուսուցիչ,ծնողներից մեկը):

Ըրքան էլ դաստիարակին ծանոթ լինի էքսկուրսիայի վայրը, նա նախապես զննում է էքսկուրսիայի վայրի և անհրաժեշտության դեպքում պատռաստում է անհրաժեշտ նյութեր (օրինակ զամբյուղներ՝ այգի այցելելու համար,թուղթ,մատիտ և այլն):Լավ է Երեխաներին ներգրավել անհրաժեշտ նյութերի պատրաստմանը, դա կօգնի հետաքրքրություն առաջացնել գալիք իրադարձության նկատմամբ:Նաև սահմանում է էքսկուրսիայի

առանձին մասերի անցկացման հաջորդականությունը, վայրերը կոլեկտիվ և առանձին դիտարկումների և հանգստանալու համար:

Կարևոր է նաև ճիշտ ընտրված ուղին դեպի դիտարկման օբյեկտ՝ այն չպետք է հոգնեցուցիչ լինի և սաներին շեղի ծրագրված նպատակից: Ընտրված ուղին պետք է լինի 2-5 կմ (կախված սաների տարիքային խմբից և ֆիզիկական հնարավորություններից): Դեպի ընտրված վայր (միակողմանի) ճանապարհորդության տևողությունը միջին խմբում չպետք է գերազանցի 30րոպե, ավագ խմբում 40-50 րոպեն: Իհարկե պետք է հաշվի առնել եղանակային պայմանները և ճանապարհի առանձնահատկությունները:

Դաստիարակը ուշադրություն է դարձնում նաև սաների հագուստին, դրանք պետք է համապատասխանեն տարվա եղանակին և վայրին:

Էքսկուրսիային մասնակցող երեխաների թիվը կրկին կախված է նրանց տարիքից, որքան փոքր են երեխաները, այնքան փոքր պետք է լինի նրանց թիմը: Այսպիսով, կրտսեր նախադպրոցական մակարդակում նպատակահարմար է իրականացնել գործողություններ 6-12 հոգուց բաղկացած ենթախմբերի հետ:

Եթե էքսկուրսիան ենթադրում է տրամադրութով ճանապարհորդություն, ապա դաստիարակը և նախադպրոցական ուսումնական հաստատության ղոկավարությունը պետք է նախապես պատրաստեն համապատասխան փաստաթղթերը (պատվեր, անվտանգության ճեպագրույց, նախադպրոցականների ցուցակ և այլն), իսկ եթե որևէ է արտադրամաս, կազմակերպություն կամ հաստատություն են այցելելու, ապա պետք է համապատասխան պայմանավորվածություն ձեռք բերեն զեկուցեն ստանան թույլտվություն:

ԳԼՈՒԽ 2 Էքսկուրսիան որպես կրթադաստիարակչական գործունեության ձև

Կրթության դաստիարակության ձևերի և մեթոդների շարքում, երբ ուսումնասիրում ենք,որևէ է կրթական ծրագիր կամ մեթոդական ձեռնարկ ուղեցույց (հատկապես ուսական գրականության մեջ),ապա շատ դեպքերում առաջին տեղում էքսկուրսիան է:Պատմությունը չի պահպանվել հիշատակում, թե երբ և ում կողմից է իրականացվել առաջին էքսկուրսիան ընդհանրապես,բայց մենք հաստատ գիտենք,որ որպես ուսումնական մեթոդ, էքսկուրսիաները սկսեցին ներմուծվել կրթական գործընթաց Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի մանկավարժների կողմից 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին : Ուսուցման այս ամենահետաքրքիր ձևի անվանումը գալիս է լատիներեն՝ «էքսկուրսիա» բառից,այն ի սկզբանե նշանակում էր «արշավանքը»:

Էքսկուրսիան կրթական կամ ժամանցային նպատակով կազմակերպված կոլեկտիվ ուղևորություն, զբոսանք, շրջագայություն է դեպի բնություն, արդյունաբերական կամ կրթական կառույցները,տեսարժան վայրեր:

Էքսկուրսիայի էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համադրության մեջ:Եթե այդ համադրությունից բացակայի ցուցադրումը ապա այն կվերածվի պաշզապես զրուցի:Հսկ եթե էքսկուրսիան գուրև լինի բացատրությունից, ապա ցուցադրումն էլ իր հերթին կվերածվի ուղղակի տեսարժան վայրի այցելության:

Ուսուցման կազմակերպման այս ձևը կիրառելի է նաև ն/դ ուսումնական հաստատություններում,որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց:Դետևաբար ուսումնադաստիարակչական գործընթացում գիտելիքների հաղորդումը ցանկալի է պարբերաբար կատարել էքսկուրսիաների միջոցով նկատի ունենալով,որ այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում,հսկ գիտելիքի աշխուժ հետաքրքիր ձևով է փոխանցվում:Այն ինչը տեսնում է սանը,տպավորվում է նրա գիտակցության մեջ դաստիարակի պատմաժի,բացատրածի որոշակի իրադրությունների, երևույթների, փաստերի շնորհիվ:Դաստիարակը ցուցադրելով միաժամանակ սովորեցնում է ճիշտ ընկալել տեսածը: Այսախով էքսկուրսիաները օգնում են ն/դ տարիքի սաներին պատկերացում կազմել շրջապատող աշխարհի մասին հենց լսածը տեսնելու,վերացականը ակնառու-պատկենավոր փոխարինելու որոշակի իրադարձությանը մասնակից լինելու միջոցով:

2.1 Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում
Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում չափազանց կարևոր են, քանի որ դրանք ուսումնադաստիարակչական գործընթացում ապահովում են ուսուցման, զարգացման և դաստիարակման փոխադարձ կապը:

ՈՒսուցում

Էքսկուրսիաներն ու մշակույթային այցերը նպաստում է աշխարհընկալման ու ճանաչմանը, սաների միտքը հարստացնում եններ տպավորություններով, քանի որ նրանք անմիջականորեն դիտում և ճանաչում են այնպիսի առարկաներ և երևույթներ, ինչպիսիք հնարավոր չեն բերել մանկապարտեզ տեսնել առօրյայում: Այն հետաքրքրություն է առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, հասարակական երևույթները, մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ, այսպիսով նախադպրոցականները՝ ստանում են ներ գիտելիքներ՝ որոշակի թեմայի վերաբերյալ ընդկայնեկով մտահորիզոնը:

Բացի աշխարհընկալման զարգացումից, էքսկուրսիաները բացառիկ նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման առումով, քանի որ դրանք խթանում են հաղորդակցվելու ցանկությունը հարստացնում բառապաշարը, կապակցվածխոսքը, երկխոսելու ունակությունները:

Դայտնի ուս մեծ մանկավարժ Ռիշինսկին, գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի առարկայի մասիներեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի: Այլ կերպ հնարավոր չեն բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի և մշակույթային այցերի միջոցով, որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության, իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ, դառնում է կոնկրետ ու որոշակի:

Զարգացում

Բոլոր տեսակի էքսկուրսիաները նպաստում են սանի մտածողության զարգացմանը վերլուծելու, ընդհանրացնելու դասակարգելու և պատճառահետևանքային կապեր հաստատելու ինչպես նաև ակտիվացնում են սանի ուշադրությունը, դիտողականությունը, հիշողությունը, զգայական ունակությունները, իսկ թանգարանների, թատրոնների և ճարտարապետական հուշարձանների այցելությունները զարգացնում են ստեղծագործական երևակայությունը, գեղեցիկը տեսնելու և գնահատելու ունակությունը, գեղագիտական ճաշակը: Էքսկուրսիաները նաև զարգացնում են շարժողականությունը:

Դաստիարակում

Գործունեության այս ձևը նպաստում է սաների բարոյական, հայրենասիրական դաստիարակությանը, ձևավորում գեղագիտական զգացմունքները և հուզական արձագանքը շրջապատի և դրանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ: Էքսկուրսիաները ձևավորում են նաև գիտակցական կարգապահություն և կազմակերպվածություն, վարքի ճիշտ դրսնորումներ դրսում, հասարակական վայրերում, դաստիարակի կարգադրություններին հետևելու և կատարելու ունակությունները:

Նախադպչոցական տարիքի սանի զարգացման համար շատ կարևոր է էքսկուրսիաների բոլոր տեսակների կիրառումը, քանի որ դրանց համադրումը բերում է համակողմանի զարգացման:

Զբոսանք մանկապարտեզում

Թերևս առաջին էքսկուրսիան, որն առաջարկվում է նախադպչոցականներին սովորաբար կրտսեր առաջին և երկրորդ խմբի սաներին սովորեցնում է կողմնորոշվել տարածքում, ծանոթացնում է հաստատության կառուցվածքին դրական վերաբերմունք է զարգացնում աշխատողների նկատմամբ և ձևավորում հարգանք՝ նրանց աշխատանքի նկատմամբ: Սովորաբար երեխաներին ցույց են տալիս խոհանոցը, բժշկական սենյակը, լվացքատունը և այլն: Նախադպչոցականների ուշադրությունը հրավիրելով աշխատանքային գործիքների, պարագաների ու իրերի վրա:

Բնության էքսկուրսիաներ

Անհիշելի ժամանակներից մարդկությունը՝ գնահատել է բնությունը:Նրա մեջ տեսնելով ոչ միայն իր կերակրողին,այլև իմաստուն դաստիարակին:Բնության էքսկուրսիաները նպատակ ունեն նախադպրոցականներին ծանոթացնել բնաշխարհին,կուտակել պատկերացումներ նրա տարբեր երևոյթների մասին:

Ինչպես հայ մեծ մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել «Բնությունն իր բազմապիսի առանձնահատկություններով ու երևոյթներով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերով,իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է:Այդ ուսուցիչն ամենահեշտ ու դյուրին ձևով խոր ու կայուն կերպով սովորեցնուն է ճանաչել բնությունը»:

Մշակույթային այցեր

Բնության էքսկուրսիաներից ոչ պակաս կարևոր են նաև մշակույթային այցերը թանգարաններ, հուշարձաններ. գրադարաններ,երաժշտական դպրոցներ, որոնք ընդլայնում ենսամների մտահորիզոնը,սովորեցնում հասկանալ և գնահատել արվեստը, ինչպես նաև ճանաչել հայրենի երկրի պատմությունը:Թանգարանները, գրադարանները կամ գեղարվեստի դպրոցները մշակույթային արժեքների պահպանման,անցյալի հիշողությունը,օգտակար տեղեկությունները սերնդեսերունդ փոխանցելու միջոց են,իսկ մենք մեծերս պարզապես պարտավոր ենք պահպանել և փոխանցել գիտելիքներն ու մշակույթային արժեքները մեր սաներին:

Արտադրական էքսկուրսիաները

Սաների մոտ զարգացնում են հետաքրքրություն տարներ մասնագիտությունների նկատմամբ,խթանում հարգալից վերաբերմունք գործարանների և այլ հաստատությունների աշխատողների աշխատանքի նկատմամբ: Նախադպրոցականները տեսնում են ոչ միայն արտադրական գործընթացը,այլև ծանոթանում,թե ինչպես են հասնում արտադրանքի որակին:Իսկ այն,որ արտադրողը պատասխանատու է այս կարևոր ցուցանիշի համար,սաներին հնարավորություն տալիս հասկանալու,թե ինչէ աշխատանքային պատասխանատվությունը:Արդյունաբերական էքսկուրսիաները շատ կարևոր են նաև հայրենասիրական առումով, երեխաները սկսում են հպարտանալ իրենց քաղաքով և երկրով:

Այսպիսով՝ էքսկուրսիաները և մշակույթային այցերը սանի գեղարվեստաստեղծագործական և ճանաչողական մտածողության ձևավորմանը նպաստող գործունեության ձևերից են:Անկախ նրանից,թե ինչ բնույթ են կրում էքսկուրսիաներն ու մշակույթային այցերը,դրանք օժտված են բարձր՝ ազդեցությամբ և արդյունավետությամբ:Դրանք՝ ընդլայնում են աշխարհներկալումը, հարստացնում ճանաչողական գիտելիքները, զարգացնում բառապաշտը, ձևավորում հետաքրքրասիրությունը, ինքնաճանաչումը, ինքնագործունեությունը և նախաձեռնողականությունը դաստիարակում են սեր դեպի բնությունը, դեպի հայրենի երկիրը, դրանց տեսարժան վայրերը, հուշարձանները ձևավորում են գեղագիտական ճաշակ, նպաստում են միջանձնային հարաբերությունների ձևավորմանը:Բացի վերը նշվածից, կազմակերխված և անցկացված էքսկուրսիաները ինքնին ախտորոշման այնպիսի կախարդական միջոց են, որի օգնությամբ կարելի է շատ լավ դիտարկել և շտկել երեխաների վարքի խնդիրները, որոնք միշտ չեն, որ տեսանելի են սովորական պարապմունքի ժամանակ:Սա հիանալի միջոց է սաների դիտարկման և գնահատման մեթոդ կիրառելու համար: Էքսկուրսիայի ընթացքում տեսանելի են յուրաքանչյուր սանի և ամբողջ մանկական թիմի առանձնահատկությունները: Դենց էքսկուրսիայի ժամանակ, եթե երեխաները չեն գտնվում իրենց սովորական միջավայրում կարելի է նկատել նաև դաստիարակի մասնագիտական գործունեության թերությունները, գնահատել՝ մանկավարժական վարպետությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 3 Եքսկուրսիաների և մշակութային այցերի օրինակներ՝ իմ աշխատանքային փորձից

Խումբ՝ Միջին Ա

Բաղադրիչ՝ Խոսքի զարգացում

Թեմա՝ Աշնան բարիքներ

Նպատակ՝ զարգացնելի հարցեր ձևակերպելու և հարցեր տալու, դրանց պատասխանելու երեխաների կարողությունները: Բառապաշտությունները: Բառապաշտությունների մրգերի և բանջարեղենների անուններով, ամրապնդել ամբողջական նախադասություններով միտքը կապակցված արտահայտելու կարողությունը:

Անհրաժեշտ պարագաներ՝ մրգեր և բանջարեղեններ

Ակնկալվող վերջնարդյունքները՝ ճանաչի և անվանի մրգերը և բանջարեղենները, կարողանա տալ հարցեր և պատասխանի հարցերին կապակցված նախադասություններով, կարևորի մարդու աշխատանքը բնության մեջ:

Կապը չափորոշչի հետ՝ իմացական ոլորտ

Նախապատրաստում՝ պայմանավորվածություն խանութի տնօրենի հետ:

Դաստիարակը սաներին տեղեկացրեց, որ այսօրվա պարապմունքը տարբերվելու է, պարապմունքը անցկացնելու ենք մանկապարտեզից դուրս:

Ընթացքը

Խթանման փուլ՝

- Երեխաներ այժմ տարվա ո՞ր եղանակն է:
- Աշունը քան՞ի ամիս ունի:

- Ո՞րոնք են աշնան ամիսները:
- Աշնանային բնության մեջ ի՞նչն է ձեզ ամենից շատ դուր գալիս:
- Ի՞նչ գույներով է աշունը ներկում բնությունը:
- Աշնանը ի՞նչերն են հասունանում այգիներում:
- Այգիներում ո՞րտեղ են աճում մրգերը:
- Ի՞նչերն են հասունանում բանջարանոցներում:
- Աշնանը ի՞նչ են հավաքում այգուց:
- Իսկ բանջարանոցից ի՞նչ են հավաքում:

Երեխաներ մենք արդեն վերիիշեցինք, թե ինչերն են աճում այգիներում և ինչերը բանջարանոցներում:

Դաստիարակը առաջարկում է երեխաներին հազնվել, որպեսզի գնան մոտակա բանջարեղենի խանութ : Դաստիարակը երեխաներին ծանոթացնում է խանութում վարքագծի կանոններին և գնում են խանութ :

Իմաստի ընկալման փուլ

Երեխաներ մենք արդեն խանութում ենք, տեսեք ինչ շատ մրգեր և բանջարեղեններ կան այստեղ : Դուք արդեն շատ լավ գիտեք ինչքան կարևոր և օգտակար են, վիտամիններով հարուստ են մրգերը և բանջարեղենները :

Երեխաներ այժմ կասեմ հանելուկներ տեսնեմ ո՞վ կիասկանա որ մրգի կամ բանջարեղենի մասին է խոսքը : Դե ուշադիր լսեք՝

Կլոր եմ, գնդակ չեմ

Կարմրաթուշ եմ, դեղձ չեմ,

Քաղցր եմ, մեղր չեմ

Դե գուշակեք ի՞նչ են ես:

«Խնձոր»

ՄԵՆՔ ԻՎԱՏԻԼՈՎ ՀԵՆՔ ԱՃՈՒՄ

ԸՆՏՈԱՆԻՔՈՎ ԵՆՔ ԼԻՆՈՒՄ,

ԿԱՐՄԻՐ, ՍՊԻՏՈՎԱԿ ԳՈՒՅՆ ՈՒՆԵՆՔ,

ԱՆՈՒՉ, ՔԱՂՋՐ ԻՎԱՄ ՈՒՆԵՆՔ:

«ԽԱՂՈԴ»

Այն ինչն է, ինչը, որ կանաչ է

Լոլիկի ընկերն է,

Նաև թթու են դնում:

«ՎԱՐՈՒՆԳ»

Այն ինչն է, ինչը, որ բարձրահասակ է

Գազարագույն է, ունի կանաչ մազեր:

«ԳԱԶԱՐ»

Շատ ապրեք ԵՐԵԽԱՆԵՐ: Եկեք խաղանք՝ «ՅՐԱՉԱԼԻ պարկ» խաղը:

Խաղի ավարտից հետո դաստիարակը ասում է, իսկ իիմա վերադառնում ենք մանկապարտեզ շարունակելու մեր պարապմունքը:

Կշռադատման փուլ՝

- Երեխաներ մենք ու՞՞ էինք գնացել:
- Ի՞նչ տեսանք այնտեղ:
- Ի՞նչ գույներ տեսանք այնտեղ:
- Ի՞նչը ծեզ դուր եկավ:

Եկեք միասին խաղանք մի խաղ և ավարտենք մեր պարապմունքը:

Խաղ՝ «Ավարտիր նախադասությունը»

- Ես սիրում եմ աշունը,որովհետև...
- Աշնան բնությունը գեղեցիկ է,որովհետև...
- Այսօր զբոսանքի չեմ գնա,քանի որ...
- Երեխաները տաք բաճկոն են հագնում,մարդիկ անձրևանոց են վերցնում,որ...
- Ես չեմ սիրում աշունը,որովհետև...
- Աշնանը թռչունները չվում են տաք երկրներ,որովհետև...
- Աշնանը ծառերը տերևաթափ են լինում,թե չե...
- Աշնանը որոշ կենդանիներ կերի պաշար են կուտակում,որպեսզի...
- Աշնանը ընտանի կենդանիների կերը շատ է,որովհետև...

Դուք շատ ճիշտ եք իմ շատ սիրելի երեխաներ,դուք շատ բան գիտեք աշնան, մրգերի և բանջարեղենների մասին:Այսքանով ավարտում ենք մեր պարապմունքը:

Դիտորդ

Մոթողիստ՝ Նառա Վարդիկյան

Պարապմունքը անցկացվեց միջին Ա խմբում, խոսքի զարգացում մեթոդիկայից դաստիարակ՝ Սյուզաննա Մղղեսյանի կողմից: Պարապմունքը իր կառուցվածքով շատ հետաքրքիր էր, երեխաները իմանալով, որ պարապմունքը անցկացվելու է մանկապարտեզից դուրս ավելի էին ոգևորվել: Կայացած և հագեցած պարապմունք էր, խաղային, զարգացնող, ճանաչողական, իմացական, խթանման փուլի ապահովմամբ:

Պարապմունքի ընտրված ձևը և կառուցվածքը համապատասխանում էր այս տարիքային խնդիրն, երեխաների համար ստեղծված էր համապատասխան միջավայր, որն էլ իր հերթին նպաստում էր, որ երեխաները ավելի ուշադիր, հաճույքով և մեծ հետաքրքրությամբ ներգրավվեն ինաստի ընկալման փուլ, որն էլ տարավ արդյունավետ կշռադատման փուլ:

Դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը մեծ է և շատ կարևոր նախադպրոցականի կրթության մեջ, այն ամբողջական էր, երեխայակենտրոն և ուղղված էր երեխաների զարգացմանը: Պարապմունքի ընթացքում դաստիարակը կիրառեց խաղեր, որոնց միջոցով երեխաների մոտ ձևավորվում և զարգանում է կապակցված խոսքը, արագ կողմնորոշումը և այլն:

Դաստիարակը հասավ իր նպատակին, քանի որ իր կողմից պլանավորված թեման ամբողջությամբ երեխաները յուրացրեցին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նախադպրոցական ուսումնական հաստատությունում էքսկուրսիաները և մշակույթային այցերը նանկավարժական գործընթացի կարևոր մասն են: Դրանք այցելություն են դեպի բնության գիրկ, տեսարժան վայրեր, գրադարաններ, թանգարաններ, արտադրամասեր, դպրոցներ և այլն: Ուսումնադաստիարակչական նպատակող, որը հնարավորություն է ընձեռում ստանալ մեծաքանակ տեղեկատվություն և հատկանշական է այն, որ այս պարագայուն ստացվող տեղեկությունը լինում է առավել տպավորիչ, հուզական, կայուն, որովհետև փոխանցումն իրականացվում է անմիջական շփման և հաղորդակցման միջոցով:

Գործունեության այլ ձևերի ժամանակ մեծ բավականություն են ստանում թե մեծերը, թե՝ փոքրերը: Սաների համար դա ոչ միայն հետաքրքիր ժամանակ է, այլ նաև ուսումնադաստիարակչական գործունեություն, որը զարգացնում է մտածողությունը, ձևավորում է հուզական ոլորտը, դաստիարակում վարքի դրսերման ձևերը, ինչպես նաև մարզվում է ֆիզիկական տոկունությունը: Արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգանում են էսթետիկ զգացմունքներ, գեղագիտական ճաշակ, դաստիարակում են հարգանք ուրիշների աշխատանքի նկատմամբ, հայրենիքի նկատմամբ, բնությունը գնահատելու և պաշտպանելու ցանկություն, ընդլայնում են սաների մտահորիզոնը ձևավորում աշխարհայացքը, նպաստում՝ խոսքի զարգացմանը այն սաների մոտ ձևավորում է այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, համագործակցությունը, փոխադարձ աջակցությունը, խնդրահարույց իրավիճակներում ինքնուրույն մտածողությունը, բացատրական մտածողեթյունը, կողմնորոշումը, միջանձնային հարաբերությունների ձևավորմանը, կոնֆլիկտների հաղթահարման որոշակի հմտությունները:

Հետազոտական աշպատանքի ժամանակ վերլուծելով ին գործունեությունը՝ ես եկա այն եզրակացության, որ էքսկուրսիաները շատ են օգնում երեխաների ինքնարտահայտման, ինքնադրսերման հարցում, եթե վերջինները մասնակցում են տվյալ էքսկուրսիայի և թեմատիկայի անցկացմանը, իսկ դաստիարակները ընդամենը ուղղորդում են նրանց և արդյունքում ավելի լիարժեք են ճանաչում իրենց սաներին: Էքսկուրսիաները հնարավորություն են տալիս, որպեսզի զարգանա երեխաների ինքնուրույնությունը, որոնց շնորհիվ կլուծվի նաև ինքնիրացման խնդիրները իսկ

ուսումնական գործընթացը կլինի ավելի բովանդակալից և հետաքրքիր:Շնորհիվ
Եքսկուրսիաների՝ երեխաները ավելի լիարժեք են ճանաչում իրենց շրջապատող աշխարհը
:

Եքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների մեջ առաջ է բերում
աշխարհայացքի բարձր արժեհամակարգի ձևավորում և մշակույթի ըմբռնման
հմտությունների յուրացում:Անփոփելով իմ հետազոտական աշխատանքը կարող եմ
ասել,որ Եքսկուրսիաները նպաստում են դիտողականության, ստացած տպավորությունը
վերլուծելու և ընդհանրացնելու, տեսածը հուզականորեն վերապրելու, ստեղծագործաբար
ընկալելու և ըմբռնելու կարողությունների խթանմանը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կոնդրաշովա Մ.Ա «Նախադպրոցականների էկոլոգիական կրթությունը պարապմունքներին և առօրյա կըանքում» Մեթոդական ուղեցույց 1991 թ:
2. Կամեննա Լ.Ա. «Մանկապարտեզում երեխաներին բնությանը ծանոթացնոլու մեթոդները»
3. Լարիսա Մորոզովա «Ինչպես ճիշտ և հետաքրքիր անցկացնել էքսկուրսիան մանկապարտեզում»
4. URL` <https://mclkic.net/zanyatiya-s-detmi/konspekt-ckskursii-v-sredney-grupp.html>
5. Նախաշավիդ գիտամեթոդական հանդես,Երևան 2014թ
6. «Դայեցակարգ» գիտական և մեթոդական էլեկտրոնային ամսագիր
7. URL` <http://e-koncept.ru/2016/76560.htm>:
8. Ушинский - "Собрание сочинений".(1948г.стр.333).